



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N ՄԿ/277-2019

ք.Արտաշատ

.. 02.12 2019թ.

ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ/ ԹԱՓՈՒՐ
ՄՆԱՑԱԾ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման» կարգով.

1. 02-001 <<Արտաշատ-Արարատ>>, 02-004 <<Արտաշատ-Մասիս>>, 02-005 <<Արտաշատ-Քաղցրաշեն-Նարեկ>>, 02-009 <<Արտաշատ-Գետազատ>>, 02-011 <<Արտաշատ-Լանջազատ-Բարձրաշեն>> ավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքը մինչև 2020թ. հունիսի 8-ը ժամանակավորապես հատկացնել <<Արտաշատ ԲՈՒԱՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. 02-015 <<Վեդի-Արարատ>>, 02-018 <<Վեդի-Ուրցաձոր-Շաղափ>> 02-022 <<Արարատ-Երասխ>> ավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքը մինչև 2020թ. հունիսի 8-ը ժամանակավորապես հատկացնել <<Վեդու ԲՈՒԱՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
3. 02-027<<Մասիս-Հայանիստ-Խաչփար>>, 02-028<<Մասիս-Ռանչպար>>, միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը մինչև 2020թ. հունիսի 8-ը ժամանակավորապես հատկացնել <<Լիզա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
4. 02-029 <<Մասիս-Նոր Խարբերդ>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը մինչև 2020թ. հունիսի 8-ը ժամանակավորապես հատկացնել <<Լիզա>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Գ. Մուրադյանի վրա:

02.12.2019

X 

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN GARIK 2811870695

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ